



ԱՍՏՎԱԾԱՆԱՉՈՒՄԸ ԸՍՏ ԵՎԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԻ

Աստվածաճանաչումը ցանկացած կրոնի հիմնական հարցն է: Ամեն մի կրոնի տարբերությունը կախված է այս հարցի լուծումից: Աստվածաճանաչման հարցում քրիստոնյա աստվածաբանները նախ և առաջ հիմնվում են Ս. Գրքի և Եկեղեցու հայրերի աշխատությունների վրա: Հետաքրքիր է, որ ուշ միջնադարյան քրիստոնյա աստվածաբանները այս հարցի պատճառով բաժանվեցին երկու խմբերի: Նախ պետք է ասենք, որ աստվածաճանաչողության հարցը սերտորեն կապված է աստվածուտության հետ, և պետք է ավելացնենք, որ ոչ մի աստվածաբան երբեք չի ժխտել այն բանը, որ ընտրյալներին, ուրբեր հասել են վերջնական երանության, հնարավորություն կտրվի տեսնելու Աստծուն, ինչը և հաստատված է Ս. Գրքում: «Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես նա կա» (Ա. Հովհ. Գ 2): Սակայն այս արտահայտությունը աստվածաբանության երկու ուղիներով զարգանալու առիթ է տվել: Նույն Հովհաննես ավետարանիչն ասում է. «Աստծուն երբեք ոչ ոք չի տեսել» (Հովհ. Ա. 18), իսկ Պողոս առաքյալը այս հարցի վերաբերյալ արտահայտվում է հետևյալ կերպ, ասելով, որ Նրան տեսնել անհրճար է (Ա. Տիմ. 2 16): Այսպիսով, հարց ծագեց. ինչպիսի՞ն է աստվածուտությունը, հավիտենական կյանքին պատկանող երևույթ է, թե այդ արդեն կարող է սկզբվել դեռ այս կյանքում (երկրի վրա), էքստատիկ փորձի ընթացքում:

Ի դարի հայտնի աստվածաբան Վլադիմիր Լոսսկին այս հարցի վերաբերյալ գրում է. «Եթե աստվածային էությունը բանաձեվումների ճանապարհով մտահասանելի չէ, ապա ինչպե՞ս կարող ենք մենք ըստ Հով-

հաննես առաքյալի ճանաչել Աստծուն այնպես, ինչպես նա կա: Իսկ մյուս կողմից էլ, եթե Աստվածային էությունը երանելի ճանաչողություն պետք է դառնա արագա կյանքում (ընդհանուր հարությունից հետո), ապա ին՞չ իմաստով մենք պետք է հասկանանք Ս. Գրքի հաստատումը Աստվածային էության անճանաչելիության մասին: Այս խնդրի տարբեր լուծումը արևելյան ու արևմտյան աստվածաբանների կողմից մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ մեր առջև կան երկու միատիկական իմացաբանություններ՝ բյուզանդական Արևելքի և լատին Արևմուտքի»<sup>1</sup>:

Համարյա նույն ժամանակ այս խնդիրը ծագեց և՛ Արևելքում (ԺԴ դ.), և՛ Արևմուտքում, սակայն տարբեր դավանաբանական համատեքստերում: Բյուզանդիայում այն ծագեց Աստվածային էության և Էներգիայի ներգործության տարբերության հարցի շուրջ առաջացած վեճերի պատճառով: Կ. Պոլսի 1341, 1351 և 1368 թթ. ժողովները ի միջի այլոց հաստատեցին հետևյալը. Աստված ըստ Իր էության բացարձակ անճանաչելի է, որը չի կարող տեսության կամ ճանաչման առարկա դառնալ նույնիսկ երանության հասած հրեշտակների համար, որոնց Աստվածային էակը Իրեն բացահայտում է և դառնում ճանաչելի Իր անստեղծ և աստվածացնող Էներգիաների ներգործությունների մեջ: Իսկ Հռոմում, ավելի ճիշտ Ալփյոնում, երանելի տեսության հարցը այլ կերպ էր դրված: Պարզապես պետք էր ճշտել. կարո՞ղ են ընտրյալները տեսնել Աստ-

<sup>1</sup> В. Лосский, «Предание отцов и схоластика». ж. Богословские труды. 1978 г. № 8, стр. 118.

վածային էությունը մահից հետո մինչև երկրորդ գալուստ, թե ոչ: Բենեդիկտոս ԺԲ Պապը 1336 թ. հունվարի 29-ին իր Benedictus Deus բանաձևում մեջ ասում է հետևյալը. «Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի տառապանքներից ու մահից հետո ընտրյալները կոտանեն և արդեն իսկ տեսնում են Աստվածային էությունը ինչ-որ մի ներհայտնությունական և անտողակի տեսիլքով, առանց որևէ մի արարածի միջնորդության, պարզ ու բացահայտ: Եվ այսպիսով նրանք վայելում են բուն Աստվածային էությունը»:

Մեր առջև փաստորեն կան երկու իրար հակասող բանաձևումներ: Առաջինը կրտրակ կերպով մերժում է Աստծո էությունը ճանաչելու որևէ հնարավորություն, մինչդեռ երկրորդը պնդում է, որ հենց Աստվածային էությունն է, որ պետք է մեր երանելի տեսության առարկան դառնա: Սակայն իրար հակասող այս երկու իմացաբանական տեսությունները համաձայնվում են մի բանում. երկուսն էլ ձգտում են տեսնել Աստծուն այնպես, ինչպես Նա կա, դեմ առ դեմ, և անպայմանորեն առանց որևէ արարածի միջնորդության:

Արևելյի և Արևմուտքի միջև այս վեճերը շարունակվեցին մինչև ԺԷ դար և մինչև այսօր էլ այդ հարցը մնում է վիճելի այդ երկու իմացաբանությունների համար:

Այս բուն վեճերի ժամանակ ԺԴ դարում իր բունձ դիրքով հիշվում է նաև Հայ Եկեղեցին: 1341 թ. Բենեդիկտոս ԺԲ Պապը Իոյանոյիայի արքեպիսկոպոս Ռիչարդ Ֆիցուալֆին հանձնարարում է քննել հայերի վարդապետությունը: Ֆիցուալֆի ուսումնասիրությունից հետո Բենեդիկտոս ԺԲ Պապը իր De questionibus Armenorum, 1. XIV ch. I մեջ մեղադրում է հայերին ու հույներին այն բանում, որ նրանք մերժում են Աստվածային էության տեսնելու հնարավորությունը: ԺԷ դարում հայտնի ճիզվիտ աստվածաբան Դիոնիսիոս Պետարիոսը անդրադառնալով այս հարցին ասում է. «Այս հարցի բուն մեղավորներին պետք է փնտրել հույների մեջ: Հույների մոտ այս հերետիկոսական տեսակետի բուն պաշտպանն ու ռահվիրան Գրիգորիս Պալաման է»<sup>2</sup>: Վլադիմիր Լոսսկին, որը հատուկ աշխատություն է նվիրել այս խնդրին, ասում է, որ անհավանական է, որ հայերը ազդված լինեն հույներից, քանի որ 1341 թ. արդեն Ռիչարդ Ֆիցուալֆը ուսումնասիրում էր հայերի դիրքը, որոնց վարդապետությունն արդեն հստակված էր: Իսկ Բյուզանդիայում աստվածտեսության շուրջ վեճերն սկսվե-

ցին 1339 թ., իսկ «պալամական» ժողովը, որը ծագել էր այս խնդրի պատճառով, գումարվեց 1341 թ., այն ժամանակ, երբ արդեն հայերի վարդապետությունը դրված էր Ֆիցուալֆի սեղանին<sup>3</sup>: Չխրսնալով «պալամական» և այլ ժողովների որոշումների մեջ, ասենք, որ Վ. Լոսսկին միանգամայն ճիշտ է, որովհետև մենք կոտանենք, թե երբևէ հայերի դիրքը աստվածաբանաբանության վերաբերյալ: Օրինակ. Եզնիկ Կողբացին պնդում է, թե Աստծո էությունը անճանաչելի ու անհասանելի է, այն անհնարին է ուսումնասիրել, քանզի մարդկային միտքը հասու չէ դրան<sup>4</sup>: Նույնը մենք կարող ենք գտնել նաև մեր այլ մատենագիրների՝ Անանիա Ծիրակացու, Հովհաննես Սարկավագի և այլոց մոտ: Անանիա Ծիրակացին գրում էր. «Թեպետ Աստվածայինը անհասանելի է բանականությանը, սակայն ճանաչելի է այն երևույթների ու մարմինների միջոցով, որոնք մատչելի են ճանաչողությանը»<sup>5</sup>: Իսկ Հովհաննես Սարկավագն ասում է. «Աստծուն կարելի է ճանաչել հավատքով, և ոչ թե բանականությամբ»<sup>6</sup>: Այն, որ Աստծո էությունն անճանաչելի է, հստակ կերպով վկայված է հայոց մեծ աստվածաբան Գ. Տաթևացու մոտ. «Իսկ բնութիւն Աստուծոյ անչայտ է և անգիտելի»<sup>7</sup>: Ուշագրայ է նաև Ագաթանգեղոսի կողմից մեզ հասած Ս. Գր. Լուսավորչի խոսքը. «Բայց Աստված կենդանի հոգի է, ...անհասանելի մտքերի ու խոհերի համար»<sup>8</sup>, «Քանզի մարդն անկարող է տեսնել Աստծուն Իր էության մեջ»<sup>9</sup>:

Փաստորեն ստացվում է, որ մեր մատենագրության մեջ դեռ Դ—Ե դարերից սկսած այս հարցն արդեն հստակված էր, որն էլ հաստատում է Վ. Լոսսկու այն ենթադրությունը, թե հայերը մինչև «պալամական» ժողովը արդեն ճշտել էին իրենց դիրքը և դժվար թե ազդված լինեին Գրիգոր Պալամացից ԺԴ դարում:

Հայտնի է այն փաստը, որ Հայ Եկեղեցին Եկեղեցու Հայր է ընդունում այն անձերին, ովքեր ապրել ու գործել են մինչև Ե դարի կեսերը, այսինքն մինչև Քաղկեդոնի ժողովը (451 թ.): Այստեղ կարող է հարց ծա-

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 119:  
<sup>3</sup> Նույն տեղում, էջ 123:

<sup>4</sup> Նույն տեղում:  
<sup>5</sup> Եզնիկ Կողբացի, Ելմ սղանոյց, Երևան, 1970, էջ 31:  
<sup>6</sup> Վ. Ա. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, 1984, էջ 111—114:  
<sup>7</sup> Նույնը, էջ 112:  
<sup>8</sup> Գ. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 103:  
<sup>9</sup> Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 199:  
<sup>10</sup> Նույն տեղում:

գել. հայերն ինքնուրույն են մշակել այս տեսակետը, թե՛ ուղղակի ժառանգել են այն Եկեղեցու հայրերից: Ուսումնասիրելով Ա. Հայրաբանական գրականությունը, կարելի է գալ այն եզրակացության, թե այդ հարցը Եկեղեցու հայրերի մոտ հստակված էր:

Դ դարում Եկեղեցին պայքար սկսեց հերետիկոսական շարժումների դեմ՝ արիստականների դեմ, որոնք պնդում էին Աստծո բացարձակ անճանաչելիությունը, և եվանգելիականների դեմ, որոնք ասում էին, թե Աստծուն կարելի է ճանաչել այնքան պարզ ու հստակ, ինչպես մենք մեզ ենք ճանաչում: Կապաղովկյան հայրերը, որոնք դարանց դեմ պայքար ծավալեցին, հաստատում էին. «Աստված միևնույն ժամանակ և՛ ճանաչելի է, և՛ անճանաչելի: Ծանաչելի է Իր հարաբերությամբ աշխարհի նկատմամբ և Իր ներգործություններով աշխարհի մեջ, և անճանաչելի է Իր էությանմբ»<sup>11</sup>: Հովհաննես Ոսկեբերանը իր ԺԵ ճառի մեջ Հովհաննես Սվետարանի Ա գլխի 18 համարը մեկնելով գրում է. «Այն, թե ինչ է Աստված, չեն տեսել ոչ մարգարեները, ոչ հրեշտակները և ոչ էլ հրեշտակապետերը: Քանզի ինչպե՛ս կարող է արարյալ բնությունը տեսնել այն, ինչը անտեսելծ է»: Իսկ Դիոնիսիոս Արիստարագացին «Յաղագս Աստուածային կոչմանց» աշխատության մեջ ասում է. «Նա չի կարող ընդգրկվել ո՛չ զգացմունքներով, ո՛չ երևակայությամբ, ո՛չ կարծիքով, ո՛չ բանականությամբ, ո՛չ ճանաչողությամբ»:

Այս հարցը բավական մեծ տեղ է գրավում Գրիգոր Նյուսացու մի շարք աշխատություններում: «Յաղագս վեցարեից» գործի մեջ նա ասում է. «Աստուծո գործությանը չափանիշ է ծառայում միայն Աստուծո կամքը»<sup>12</sup>: Ուրիշ տեղ, խոսելով նույն հարցի շուրջ, նա շարունակում է. «Եվ այդ իսկ պատճառով էլ մարդու բանականությունը ի վիճակի չէ չափելու այդ (գործությունը), ոչ էլ արտահայտելու խոսքի մեջ: Ոչ միայն մարդկային, այլև հրեշտակային բանականությունը, որն ավելի բարձր ու կատարյալ է, անմատչելի է անեզր Աստծո ճշգրիտ ճանաչումը, որովհետև մեծ և անանցանելի է այն տարածությունը, որով ան-

տեսելծ բնությունը անջատվում է ստեղծված բնությունից»<sup>13</sup>:

Գրիգոր Նյուսացին հաստատելով, որ Իր էության մեջ անճանաչելի Աստված ճանաչելի է դառնում մարդու համար Իր հարաբերությամբ և ներգործությամբ աշխարհի մեջ, այսպիսի ճանաչողության ճանապարհի վրա զանազանում է ճանաչողության երեք աստիճաններ: Առաջին՝ Աստուծո ճանաչումը բնության մեջ բնական հայտնության միջոցով: Երկրորդ՝ ճանաչում հավատքի միջոցով, իբրև Աստծո պարգև: Եվ երրորդ՝ Աստուծո ճանաչումը մարդու կողմից իր (մարդկային) բնության միջոցով, այսինքն ինքն իր մեջ, իբրև արարած ըստ Աստուծո պատկերի:

Առաջին աստիճան՝ Աստուծո ճանաչումը բնական հայտնությամբ: «Նա, որ անտեսանելի և անհասանելի է Իր էությամբ, Ով գերազանց է և վեր է ամեն մի էությունից, տեսանելի և մատչելի է այլ հարաբերությամբ: Այսպիսի ճանաչողության ձևեր շատ կան, քանզի աշխարհի տեսանելի իմաստության մեջ կարելի է գուշակորեն տեսնել Արարչին, Որը ստեղծել է ամենայն իմաստությամբ և նախախնամությամբ»<sup>14</sup>: Սա անցնելով, մարդը աստվածճանաչման ճանապարհին բարձրանում է երկրորդ աստիճանի վրա՝ հավատքի աստիճանին: «Հնարավոր չէ մոտենալ Աստծուն, եթե չմիջնորդի հավատքը և իր հետևից չբերի հետազոտող բանականության անհասանելի բնության հետ շփմանը»<sup>15</sup>:

Մարդկային բանականությունը իր հնարավորության չափով հավատքի միջոցով շփվելով անհասանելի բնության հետ առաջ է բերում մարդու սահմանափակ լինելու գիտակցությունը Աստուծո մեծության դեմ, բարոյական անմաքրության զգացումը Ամենատրբի առջև: Այդ ժամանակ, ասում է Նյուսացին, մարդը բարձրանում է աստվածճանաչման ամենաբարձր աստիճանին՝ աստվածճանաչում սեփական բնության մեջ, իբրև արարած ըստ Աստուծո պատկերի, մեղքերից մաքրվելու միջոցով նպատակ ունենալ կենդանի կերպով շփվելու Աստծո հետ: «Աստված Իր պատկերն է դրոշմել մարդու հոգու մեջ, բայց ինքը մնացել է դրանից դուրս և ոչ մի բան չի փոխանցել դրան Իր էությունից»<sup>16</sup>: Ըստ Գ. Նյուսացու,

<sup>11</sup> С. Лосев, «Учение святых отцов Церкви о познаваемости Бога в опровержение армянских заблуждений», ж. Вера и разум, 1898 г., № 7, стр. 399.

<sup>12</sup> Св. Григорий Нисский, «О шестодневе». Творения святых отцов. М., 1861 г., ч. I, стр. 9.

<sup>13</sup> Св. Григорий Нисский, «Опровержение Евномия», Творения. М. кн. 12. ч. 6, стр. 292. Творения. слово 6-ое, ч. 2, М., 1861 г., стр. 44.

<sup>14</sup> «Опровержение Евномия» стр. 302.

<sup>16</sup> «Об устроении человека», ч. I, Творения, М., 1861 г., стр. 140.

մարդու հոգին բազում հատկություններով  
 նման է Աստծուն, բայց միևնույն ժամանակ  
 նույնական չէ Նրա հետ ըստ էության: «Ե-  
 թե պատկերը առանց որևէ տարբերության  
 ամեն ինչում նման լինեք նախապատկերին,  
 ապա նա կդադարեք պատկեր լինելուց և  
 իսկույն կմիախառնվեք բուն առարկայի  
 հետ, որի պատկերն էր հանդիսանում»<sup>17</sup>:  
 Հետևաբար, եզրակացնում է Նյուսացին,  
 պատկերի և նախապատկերի հարաբերու-  
 թյունը անտարակույս ենթադրում է առավել  
 կամ ավագ չափով տարբերություն նրանց  
 միջև: Այս տարբերությունը պետք է հաս-  
 կացվի իբրև բնությունների տարբերություն,  
 որովհետև լինելության պատճառը մար-  
 դուն անջատում է Աստվածային էակից,  
 քանի որ Աստված անստեղծ է, չունի ըս-  
 կիզք, Ինքն Իր պատճառն է: Նա հավի-  
 տենական ու անվերջ է, իսկ մարդու հոգին  
 ստեղծված է, ունի վերջ և փոփոխական  
 է»<sup>18</sup>:

Փաստորեն մարդը կարող է ճանաչել  
 միայն Աստվածային հատկանիշները, իսկ  
 էությունը՝ երբեք: Եվ ուշագրավն այն է, որ,

խոսելով Աստուծո էության անճանաչելիու-  
 թյան մասին, ինչը միշտ գաղտնիք կմնա  
 սահմանափակ մարդու բանականության  
 համար, Նյուսացին Աստվածային հատկա-  
 նիշների ճանաչողության վերաբերյալ ա-  
 սում է, թե այն էլ ճանաչելի կդառնա միայն  
 նրանց համար, ովքեր մաքուր են սրտով  
 (Մատթ. Ծ 8)<sup>19</sup>:

Վերևում մենք տեսանք, թե ինչ հայացք  
 ունեին Եկեղեցու հայրերը աստվածճանա-  
 չողության վերաբերյալ, ինչը կարող է մեզ  
 հիմք ծառայել ասելու, որ Հայ Եկեղեցու  
 հայրերը վստահելի ու ճշմարիտ հիմք ու-  
 նեին մերժելու Աստուծո բուն էության տես-  
 նելու կամ ճանաչելու հնարավորությունը,  
 քանի որ կապադովկյան և այլ հայրերի  
 գործերը Ե դարից սկսած ծանոթ էին Հայ  
 Եկեղեցու Հայրերին և մեծ հեղինակություն  
 ունեին, և բնական է, որ մեր Եկեղեցին  
 հիմնվել է Ե դարի այս վարդապետության  
 վրա, և ոչ թե ազդվել Գրիգոր Պալամաչից  
 ԺԴ դարում, ինչի մեջ մեզ մեղադրում էին  
 Ռիչարդ Ֆիցցուալֆը, Բենեդիկտոս ԺԲ Պա-  
 պը և Դիոնիսիոս Պետարիոսը:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 141:

<sup>19</sup> «О блаженствах, стр. 359—362.

